

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
ՁԱՐՄԱՅՐ ԲԱՀԱՆԱՑ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

«ՇԱԲԱԹ» 25 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿՐԴԵԿԱՆ ՎՐԻՐՎՈՒՄՆԵՐԸ. —

Նամակ առ Հրայր. — (Գ.) «Ինչո՞ւ պէ՞տք է յաճոխեմ
եկեղեցի»

Վիշաք (քերթուած)

ՈՐՈՒՄՆ ՏՄՆԸ (ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՅ). — Ասպուհ լեռը

եւ գիհի ծառը

Նուիրապետութեան Հաստատութիւնը

Շիրվանզատէի դիրքը Ռուսահայ Գրականութեան

Պատմութեան մէջ

ՅՈՒՆԻՈՍ ԵՒ ՊԱՄԳԻԼԻՈՍ. — Առաջին Գրիտոնեա-

նեռու ժամանակուան պատմութիւն (Շար.) . ԼէժՆ ԹՈՒՍԹՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան լուրեր

ՁԱՐՄԱՅՐ ԲԱՀԱՆԱՑ

ԴՊՐԵՎԱՆՔՅԻ

ԲԱՅԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մ. ԱՐԲԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

Մ. Յ.

Տպագր. Ց. ՏՕՂԱՐԱՄԱՃԵԱՆ

Ստալրան-Համալ Մօլա-Բաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	» 10 Ժրանգ
Ռուսիա	» 4 բուլբ
Ամերիկա	» 2 sojour
Ձեռքէ կը ծախարի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանձալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՐԱՄԱՏՉԵԱԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է շինկտաշ արմնի քննասնո՞ւ « ډاډاډار » غزني مديري پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿԲԹԵՍԹԵՐԹ

ԱՆԴՔԻՍՆՈՒՊՈՒՄ. — Առաջին. Փոխա-

նորդ Տ. Արուստիս Բհնյ. Դերձակեան

ԱՂԵՐՄԱՆԳՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-

բիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջին. Փոխանորդ Տ. Պո-

ղոս Վրդ. Գալուստեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ Պողար-

եան

ԱՅԻՈՇ ԳԱՐԱՀԻՍՍ. — Տ. Խաչատուր

Ա. Բհնյ. Տօնէլեան

ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանտեան էֆ.

ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.

Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-

գիսեան

ԵՕՁԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.

Դիմաքսեան

ԵՐՁԵԿԱ. — Տ. Մարտիկ Բհնյ. Թորոսեան

ԶՄԻԳՈՒՄ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.

Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.

Գալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.

Սաաթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մարտիկ էֆ. Թորոսեան

ԿԻՐԱՍԻԼՔԻՆ. — Տ. Ներսէս Բհնյ.

Նշանեան

ՄԱՐԱՆ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-

պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՒՐԻՅԱՆ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան

Շ. ԴԱՐԱՀԻՍՍ. — Տ. Նաթան Բհնյ.

Տառեան

ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեան

ՊԱՆՏՐՄԱ. ՊԱՆՏՐՄԱՐ. — Առաջնորդ Տ.

Կարապետ Եպիսկ. Մաղլումեան

ՊԱՆՏՐՄԱ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.

Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՏՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըլ-

նիկեան

ՌՈՏՈՍԹՈՒՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.

Վրդ. Ասլանեան

ՍԱՄԱՐ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.

Օտապաշեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջին. Փոխանորդ Տ.

Թէոփիլէ Բհնյ Օտապաշեան.

ՍԵՐԱՍՏԻԱ. — Հագեւոր Տեառն Տ. Կարա-

պետ Բհնյ. Թոլմաշեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմաքսեան Բհնյ. Տրէզ-

եան

ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-

եան

ՏԻՄԷՐՈՂԱՆ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան

ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեառն Տ. Վահան-

պետ Բհնյ. Բիպարեան

ՔԱՂ. — Առաջնորդ Տ. Պոսակ Վրդ.

ՅԻՐԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան

ՅԻՐԶԵՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 25 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 24

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԵ ՀՈԳԵԿԱՆ ՎՐԴՈՎՈՒՄՆԵՐԸ

ՆԱՄՍԿՆԵՐ ԱՌ ՀՐԱՅՐ

Գ.

ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Է ՅԱՃԱՌԵՄ ԵԿԵՂԵՑԻ

«Ամայի» խորագրով գրութիւնս, որ հրատարակուած էր Տաճարի ՉՁրդ թուով, առիթ տուեր է քեզի՝ անդրադառնալու սիրական հարցումներէդ մէկուն։ Այս անգամ ալ կը հարցնես. —

«Ինչո՞ւ պէտք է յանախեմ եկեղեցի»

Կը խոստովանիմ որ նոյն գրութիւնս, հետու ուսումնասիրուած յօդուած մը ըլլալէ, օրուան տպաւորութիւնն տակ զըրուած էր, եւ քսե հարցասէր միտքդ գահացնելու բնութիւն չունէր։ Իրաւ է որ խորունկ հաւատացեալ մը, Եկեղեցիին — մանաւանդ Հայ Եկեղեցիին — ուսուցողական ամենաբարձր դերը հիմնապէս ըմբռնող մը՝ այդ հարցումը չպիտի ընէր։ Անիկա հարցումին մէջ պիտի գտնէր իր պատասխանը. պիտի ըմբռնէր թէ Եկեղեցիին չէնքը՝ իր նուիրակահոլութիւնը, իր սուրբ օծումը կը ստանայ հաւատացեալներու խումբերամ ներկայութեամբ իր խնկարոյր կամարներուն տակ, թէ Եկեղեցին՝ ժողովուրդին, նոյն հաւատքով

նոյն համոզումով ուժովցած ժողովուրդին համախմբումով միայն կրնայ կոչուիլ Եկեղեցի, եւ անոր բացակայութիւնը կը զրկէ զայն իր նշանակութենէն, կը դարձնէ առաւել կամ նուազ չքեղ չէնք մը, ուրիշ նմանօրինակ բազմաթիւ աշխարհիկ չէնքերու նման, որոնց մէջ պերճանքով ու հարստութիւնով մեր սրբավայրերէն շատ աւելի համբաւ ունեցողներ չեն պակսիր։

Բայց «Ժամանակի նշան» մըն է հարցումդ. սկեպտիկ միջավայրի մէջ ապրող մը, որքան ալ ջերմ հաւատացեալ մ'ըլլայ, անխուսափելի կերպով կ'ենթարկուի իր շրջավայրին ազդեցութեան։ Եւ հարցասէր միտք մը միշտ իրաւունք ունի լուսաբանուելու։ Դուն նորէն չնորհաւորելի ես հալցօւմիդ համար։ Ո՛րքան սկեպտիկ միտքեր կան որ կրօնքին հաղեկան միութարութենէն զուրկ մնացած են, պարզապէս այդ կարգի հարցում մ'ընել զժկամակելնուն համար՝ «յետադիմական» կոչուելու երկիւղով։

Արդ, քու պարզ հարցումիդ պատասխանելու համար շատ պարզ խօսքերով, ըսեմ, սիրելի՛ս, թէ Եկեղեցի երթալը նուիրական պարտականութիւն մըն է ամէն բանէ առաջ եթէ կը հաւատանք Աստուծոյ մը գոյութեան, եթէ գիտենք

թէ տիեզերքի ամենակարող, բարեգութ Արարչին անհուն շնորհքն է որ կը վայելնք ամէն օր, ամէն ժամ, թէ մեր կեանքը, մեր առողջութիւնը, մեր խմացականութիւնը, երկիրն ամբողջ իր բոլոր մեծ-վայելչութիւնով եւ իր բազմազիւ բարեբերութիւններով, հետեւ ապուշ դիպուածի մը արդիւնքն ըլլալէ, ստեղծագործութիւնն են գերբնական, ամենազօր խմացականութեան մը, ապա ուրեմն մենք նուիրական պարտականութիւն մ'ունինք, երախտագիտութեան հարկ մը մատուցանելու տիեզերքն ստեղծագործող ամենխմաստ էակին:

Բայց ինչպէս ամէն պարտականութեան կատարում՝ որտի անճառ գոհունակութիւն մը կ'առթէ զայն կատարողին, Աստուծոյ հանդէպ մեր երախտագիտական պարտականութեան կատարումն եւս աղբիւր մը կ'ըլլայ մեզի գերազօրն վայելքներու, որոնց համեմատեալ չի կրնար փոխարինել զայն աշխարհիկ ու եւ է զքոսանքի հետ: Այդ վայելքները այնքան բարձր են աշխարհային հաճոյքներէ, որքան բարձր է հոգին մարմինէն, եւ աւել, բացարձակապէս այդ անուշ վայելքներէն զուրկ կը մնան անոնք որ չեն ուզեր համոզուիլ հոգիի — անմահ հոգիի մը — գոյութեան:

Այդ վայելքներու առաջինն է աղօթքի — համախումբ աղօթքի — միմունքին վերելքը գէպի յաւիտեական Աղբիւրը յոյսի եւ ուրոյ: Աղօթքը հաղորդակցութիւնն է Արարչին հետ, աղօթքը մարդուս բարձրացումն է աշխարհիկ, գոեհիկ, գձուձ մտածումներէ վեր, հոգեկան մաքուր միջնորդութիւն մը մէջ: Եւ համախումբ աղօթքը հաւատքով, յոյսով ու սիրով միացած հաւատացեալներու՝ քահանային սրտագին մաղթանքներուն մէջ, եկեղեցիին նուիրական կամարներուն տակ, մինչ քրիստոնէութեան ամենավսեմ խորհուրդը՝ անձնագոհութեան Պատարագը կը մատուցուի վերը սուրբ սեղանին վրայ, մատաղատի դպիրներու հրեշտակային աշխուրհներուն մէջ, օ՛հ, այդ աղօթքը՝ հաւատացեալին կ'ընծայէ անճառ գոհու-

նակութիւն մը, հոգիի այնպիսի վայելք մը որ չի կրնար բազմատութեան դրուիլ աշխարհային ամէնէն քաղցր հաճոյքին հետ:

Եւ եկեղեցին, համախումբ աղօթքի քաղցր վերացումին հետ՝ անանջատաբար՝ կուտայ մեզի ուրիշ ոչ նուազ անխիտարինքի բարիք մը: Ինչպէս կ'ընծայէ մեզի միսթարութիւն մեր տխրութեան մէջ, թեթեւացում մեր վիշտներուն, մեր անշարմանելի ցաւերուն մէջ: Աստուծոյ խօսքը՝ Ս. Գրաց հին եւ նոր կտակարաններու, մարգարէութեանց, առաքեալներու թուղթերուն եւ Աւետարանի ընթերցումներով՝ կուզայ մեզի պարգևել այն կարգի սփոփանքներ, զորս ոչ մէկ բան այս աշխարհի մէջ կարող է տալ: Աստուածաշունչին, աշխարհի այդ մեծագոյն Գիրքին, ներքողը չպիտի ուզեմ ընել այս տեղ. նախընթաց նամակով մը շօշափած եմ ատիկա, եւ յառաջիկային ալ առիթնիր կրնան ներկայանալ անդրադառնալու: Անցողակի ըսեք թէ Աստուծոյ Ս. Հոգիով ներշնչուած այդ Գիրքը անսպառ շտեմարան մըն է բարոյականի ամենազարմար սկզբունքներու, մարդուս անհատական եւ ընկերային, ներկայ եւ ապագայ կեանքի երջանկութեան համար անհրաժեշտ օրէնքներու եւ կանոններու, արդարութեան, բարութեան, զիւրութեան, սիրոյ, անձնութեան վսեմ պատուէրներու, որոնց մտադիւր ունենցողութիւնը, եւ խղճամիտ կատարումը ո՛րքան չարիքներ պիտի վերցնէր աշխարհէն, ճշմարիտ երջանկութեան խոհալը իրականացնելով երկրի վրայ:

Եւ եթէ յոյժ ձեւականութեան համար եկեղեցի գնացողներ՝ մտազբաղ լինակով կը մանեն Աստուծոյ տունը եւ նոյն մատաղաղութեամբ կը մեկնին այն տեղէն, առանց օգտուելու եկեղեցւոյ մէջ տրուած հոյակապ դասերէն, կը գտնուին ճշմարիտ հաւատացեալներ, որոնք երկիւղած զգացումով մը կը մանեն հոն, կ'ունենան Աստուածային պատգամներու, եւ բարոյապէս զօրացած, կեանքի պայքարին համար սրտապնդուած դուրս կ'ելլեն անկէ:

Տառապողները, վշտակրեալները խորունկ սփոփանքով մը թեթեւցած կը զգան ինքզինքնին՝ իրենց սրտին վրայ ծանրացած վիշտերէն։ Որդեկորոյս մայրը հաւատքին ուժով կը դիմէ եկեղեցի ու կը մխթարուի։ Սրտի եւ հոգիի ահաւոր տագնապներու ենթարկուող հաւատացեալը Աւետարանի անուշ խօսքերով կը զօտեպնդուի։ Աշխարհի ամենէն յուսահատական իրադարձութիւններուն տակ տուայտող մը, երբ իր վիշտերը կուլայ գերագոյն Վշտակրեալին Խաչին առջեւ, ո՛հ, հաւատա՛, սիրելիս, իրապէս կը սրտապնդուի անիկա, նոր ուժ մը, կորով մը, կը ստանայ կեանքի պայքարը աւելի զօրաւոր կերպով մղելու, մարդկային անիրաւութեանց դէմ ոգորելու, բախտին որքան դժխեմ նոյնքան ալ անհասկնալի քրմահաճոյքներուն դէմ կոռելու։

Եւ եթէ Եկեղեցին անհատական կեանքերու վրայ բարեբար ներգործութիւն կընէ, նոյնքան բարեբար է իր ազդեցութիւնը վշտակրեալ, չարչարուած ազգերու վրայ, ինչպէս է Հայ ազգը։ Հայ Եկեղեցին, միակ ապաստանարանը Հայու աղգային գոյութեան, պահպանն ալ եղած է անոր դարաւոր աւանդութիւններուն ու փառքին։ Ան, բռնակալութեան ամենէն արհաւիրքի օրերուն ալ ազատ մնաց, ան պահպանեց ու համարձակ հռչակեց մեր անցեալ կեանքն ու փառաւոր օրերը, պատմեց — ու միշտ կը պատմէ ու յաւիտեան պիտի պատմէ — մեզի մեր սուրբ Նախնիքներուն մեծ գործերը, անձնութիւնները, յաջողութիւնները գործածեող բերած են անոնք, մեծագործութիւնները զորս կատարած են։

Ազգային տօներու շրջանին մէջ ուր կը գտնուինք այս պահուս, պէտք չունիմ յիշելու թէ ինչե՛ր կը պատմէ մեզի Հայ Եկեղեցին, ի՞նչ վսեմ օրինակներ կը պարզէ Ան մեր աչքին առջեւ։ Լուսաւորչի հոյակապ գործերը՝ իր Ելն ի վիրապէն եւ Գիւտ Նշխարաց տօներուն առթիւ, Մեծն Ներսէսի նոյնքան հոյակապ ջանքերը, Սահակ-Մհարոպի՝ յաւէտ երկրպագելի այդ սուրբերուն՝ մեզի ընծայած

հիմնաւոր, տեւական բարիքը եւն, որոնց թուումը չատ երկար պիտի ըլլար։ Մարդ, եթէ լսող ականջներ եւ իմացող հոգի ունենայ, անկարելի է որ հայրենասիրական զգացումով մը սրտի տրտիւմ մը չունենայ, ունենդրելով այդ տօներուն առթիւ երգուած սքանչելի շարականներուն։

Սիրենք մեր Եկեղեցին, ազնիւ բարեկամս, ջիւղ սիրով ու հաւատքով դիմենք հոն, եւ հոգիի ու սրտի զմայլելի վայելքներ մեր բաժինը պիտի ըլլան։^(*)

Գոյգ

ԶԱՐԽԱՅՐ ԲԱՀԱՆԱՅ

Վ Ի Շ Տ Ը

Լճակին ջինջ կապուին մէջդիտեցի.
Ալեակն ըսաւ. «Չունիս ժպիտ եւ ոչ գոյն
Դժբաղդ տղայ մըն եւ մարած ու տժգոյն»
Հոն արցունքիս տամուկ շաղը Թափեցի։

Գարնան քաղուոր ծաղիկները զիս տեսան.
Պլպլուն ըսաւ. «Չունիս հրապոյր եւ ոչ գեղ,
Ի՞նչ փոյթ եթէ ունիս քերթուածն ու գեղգեղ.
Երգող մ'ըլլաս եւ կամ խանդոտ մէկ գօսան։»

Հիւրիկներն ու շուշաններն ու վերջալոյս
Ճակտիս դրին Նիմար յող մը. շաղ մը Թաց
«Հէք պարմանի, քու բաժինդ է վիշտն ու լաց։»

Վարդն ու տերեւ. Լսւին. Արեւ. Արշալոյս.
Չ'դիտեցին Թէ վառ սիրտ մը կը հալի.
Լոկ լճակը եղաւ վշտիս հալելի։

ԳՊՐԵՎԱՆԲՑԻ

(*) Տարբեր խնդիր է Թէ Հայ Եկեղեցւոյ պաշտօնեաները, այսօր, ի վիճակի՞ են ցոլացնելու անոր քրիստոնէական ամենարժր բարոյականը, Հայ ժողովուրդին առջեւ արժեցնելու անոր հզօր դերը՝ պահպանելու համար մեր ազգային անհատականութիւնը։ Ատոր քննութիւնը, որ կը մտնէ եկեղեց. բարեկարգութեան սահմանին մէջ, Թերեւս առիթ ըլլայ ինձ՝ մօտաւոր նամակի մը նիւթ ընելու։



ՕՐՈՒԱՆ ՏՕՆԸ

ԳԻՏ ՆՇԻԱՐԱՅ ՍՐԲՈՅ ՇՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

Հայաստաննայց առաքելական Ս. Եկեղեցին այսօր մեծահանդէս կը տօնէ իր քաղցնրախտ Հայրապետին Նշխարաց Գիտի տօնը, երկիցս յիշատակելէ ետքը անոր կեանքին միւս կարեւոր դրուագները՝ մուսն ի վիրապն եւ Յլն ի վիրապէն: Ս. Լուսաւորիչ եւ իր կեանքն ու հոյակապ գործունէութիւնը փառաւոր օրինակ մըն են քրիստոնէական ամուր հաւատքի եւ զօրաւոր ու կամքի տէր անհատականութեան, որոնք ներշնչած են Հայ Եկեղեցոյ պատմագիրներուն՝ հիացիկ եւ զգալուն էջեր: Գուցէ անյաջող ըլլար նոր փորձ մը՝ տեղեցնելու այդ էջերուն վրայ: Ուստի լաւագոյն կը համարինք առաջ բերել Տ. Բարգէն Վ.ի (այժմ Եպիսկոպոս Անկիւրիոյ) հետեւեալ սրտագրաւ հատուածը՝ որ երբէք չը պիտի կրնայ մոռցուած էջ մը ըլլալ Հայ կրօն. մատենագրութեան մէջ. —

ՍԵՊՈՒՂ ԼԵՌԸ ԵՒ ԳԻՂԻ ԾԱՌԸ

Սեպտեմբեր «Գերազանց» լեռին մաքուր եւ ջինջ բարձունքներուն վրայ ամփոփուած, առանձնացած էր ան. Հսկայ գործունէութիւնը, ամուր եւ խորունկ հետք մը ձգող քայլերով յաջողցուած ու արդիւնաւորուած գործունէութիւնը, փոխանակ աշխարհի փառքերու մէջ մղելու գլխի, վարած տարած էր լեռներու մենութեան Յոգնած մարմինի մէջ խայտացող լա՛յն, սո՛ւրբ եւ սեպտեմբերի մը արտայայտիչն է մենաւոր կեանքը: Ա՛յ հոն հասած էր Լուսաւորչի կեանքին վերջալոյսը: Ատեն տունն կ'առանձնանար: Իր ցանցատ ալցելութիւնը իրմով լուսաւորուած Հօտին ու Եկեղեցիներուն, կենդանի միջօրէին մէջ խաւարումէն նոր ելած արեւին սզգեցութիւնը կ'ընէր: Ա՛յնքան ցանկալի էր Անոր տեսքը. ա՛յնքան պաշտում կար Իրեն համար:

Կրօններու պատմութեան մէջ չեմ յիշեր դէ՛մք մը, տիպար մը, որ անոր չափ յամառած ու յաջողած ըլլայ իր սկզբունքին վրայ, իր հաւատքին մէջ: Բովանդակ քրիստոնէութեան ՄԱՐԴՆ է Լուսաւորիչ,

որովհետեւ իր գործունէութիւնը վիթխարի է. իր առաքելութիւնը դժպիսի անհարթութիւններու մէջ յաջողցուած է կատարելապէս, եւ Աւետարանը, Քրիստոսի խօսքը, կրցած է արմատացնել իր խնկ միջոցներով: Այս է պատճառը որ իր գործունէութիւնը չհշտեցի հսկայ, վիթխարի իմացումներով եւ ո՛չ թէ բառերով:

Իրեն պէս սեպտեմբեր՝ լեռը՝ միանձնութեան տենչալի վայրը եղած էր: Այրերը, ծերայերը, սուրբ ու քարանձաւները կարծես չառ նեղ էին Լուսաւորչի լուսաւոր էութեան: Բայցօթեայ, ծառերու շուքին տակ շնչուած կեանքը տնուշ կուգար իրեն: Ծիւղ Յիսուսի պէս, Զիթնիներու լեռը, ձիթենիի ծառերը կը հրապուրէին անոր հոգին: Բայց Սեպտեմբեր ձիթենիներով ողողուած չէր: Յորեկուան հովը, գիշերուան զովը, կրկնքին բիւրաւոյս կազմուածքը, լուսնակին նազանքը՝ ներշնչող, մխթարող զօրութիւններ ունիւրապէս պարտասած մարմիններու համար: Մեծ գործերու մէջ յաջողած մարդը ուրիշ կերպով չի կրնար մխթարուիլ:

Լուսաւորիչ այդ մարդն էր Սեպտեմբերին միանձնութեան մէջ: Շա՛տ տարօրինակ կ'երեւայ այդ կեանքը անոնց, որոնք մեծ մարդիկը տարբեր վախճանի մը մէջ տեսնել կ'ուզեն: Այդ կեանքը, սաւակայն, տարօրինակ չէ՛. իր յաջողութեամբ գործին պէս անմահն է: Եւ արդէն ո՛չ միայն իբր ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, այլ մա՛նաւանդ իբր ՄԱՐԴ ալ՝ Ս. Գրիգորին բոլոր կեանքը անմահութիւններու համայնք մըն է: Այս իրողութիւնն է որ Լուսաւորիչը կը զատէ հասարակ մահկանացուներէն:

Հեռո՛ւ առտնին տաղտուկներէ, հեռո՛ւ քաղքենի աղմուկներէ, Լոյսի Սիւնը կ'առկոյժէր Սեպտեմբեր լոյսերուն եւ բոյրերուն մէջ: Աղօթքներու նուիրուած՝ կ'ըզգար իր մարմինին մահացումը: Անոնք որ ոլորտած են Սեպտեմբերի պէս սարերու վերայ, մայիսի մէջ, կ'ըմբռնեն լեռներուն հմայքը: Բնութիւնը սերտելու համար առանհաւարութեամբ պէտք մըն է լեռներու կեանքը: Վայրի բուսականութիւն՝ իր բոլոր կողմերով կենդանացած՝ կը տրեխլանջ-

քիզ խորհրդը: Չեա ուզեր իջնել այդ բարձունքներէն: Վարի կեանքը սափակ, երկբարձարչ կուգայ մարդուն: Տերեւախիտ թեղօշ մը. բարձրաբերձ կաղնի մը, չնորհապեղ գիհի մը՝ սարաւոյթէ մը աւելի կենսաւէտ, հանդարտիկ բնակարան մը կ'ընծայէ իր հովանիով:

Լուսաւորիչ իր հանգիստը, ըստ աւանդութեան, գիհի մը չաւքին տակ կը գտնէր: Իր յաւիտենական հանգիստն ալ գիհի փորոգին մէջ գտած էր ան:

Ո՞վ կրնայ երեւակայել ա՛յդ խաղաղիկ նինջը Մեծագործին՝ ծաղկեալ ծերութեան մը պատկանելի եւ վեհաշուք կերպարանքին վրայ, եւ այս ամէնքը ծառի մը չուքին տակ:

Հարստութիւն, կալուածք, տուն տեղ, ապարանք, ողբարակ, ամէն բան ունէր Ան զաշտահայեաց բլուրին վրայ: Այս չքեղութիւնը, այս ճոխութիւնը՝ Լուսաւորչի համար չէին: Ամէն բան ունէր Լուսաւորիչ, բայց բան մը չուներ՝ Մեծ Առաքեալին բացատրութեամբ: Թոշունները ունէին իւրենց բոյները. աղուէնները՝ իրենց որջերը, բայց Լուսաւորիչ իր գլուխը գնելու համար որոշ տեղ մը չուներ Յիսուսի պէս: Գիհի ծառին փորոգը վերջին տեղը եղած էր Անոր եղծանելի մարմինին, երբ իր ունեցածներէն դուրս՝ աշխարհ մը կար, որ պատրաստ էր ասպնջական ըլլալու իր Լուսաւորիչին:

Ոչ ոք տեսաւ անոր վերջին վայրկեանը, ո՛չ ոք լսեց անոր կտակը, ո՛չ ոք փակեց Անոր աչքերը: Սարի մարդիկ, հովիւներ, լաւ եւս հովիւ մը միայն տեսաւ աննչոյցած մարմինը Անոր՝ գիհիին ներքեւ. չյանդիմեցաւ մօտենալ. քարերով պատուար շինելով ծառին շուրջը, որ գիշակեր թռչուններ եւ կենդանիներ ալ չմօտենան Անոր:

Հովիւներ, այո՛, միշտ հովիւներ են որ կը վայելին ամէնէն տենչալի տեսարանը. ըլլայ Բիթղեհէմի գիշերուանը, ըլլայ Սեպուհին ցորեկուանը, ըլլայ նոյն իսկ՝ աւելի հին անցեալի մը մէջ՝ Հովիւ Մարգարէին տեսածները Սինայի վրայ:

Հովուական կենցաղի պարզութեան մէջ խորհրդաւոր հանդիպումներ:

Սեպուհի շինական հովիւը՝ Քաջ Հովուապետը գտած էր: Վաղեց, յուր տուած քողաքին. գտնուած էին Լուսաւորչին նշխարքը:

Այն ատենէն ի վեր գիհի ծառը մասնաւոր պատկառանքով մը օժտուեցաւ:

Համէնցիք կը պահեն Արսրն (= Գիհի)ն պատկառանքով: Հասարակ ծառի կամ փայտի պէս չեն գործածեր զայն ամէն տեղ: Կր գործածեն պոսիչ (= ջուրի տակառիկ) եւ սիւն եւլն. չինելու, որովհետեւ Լուսաւորիչը ա՛յդ ծառին փորոգին մէջ վախճանած է: Սիրուն աւանդութիւն, իմաստալից զրոյց, ի՛նչ ալ ըլլայ՝ Լուսաւորիչը յիշեցնող պարագայ մը շինական խաւերու մէջ:

Իսկ Սեպուհը Լուսաւորիչի ամբողջ պատմութիւնը կը մարմնացէ:

Պլուզ Վարդապետը, Յովհաննէս Երզնկացին, սրբազան թափով մը Ս. Գրոց ամէնէն նշանաւոր լեռներուն վրայ կ'ոստոստէ. քով քովի կը բերէ զանոնք Սեպուհին հետ համեմատելու:

«Լերինք ամենայն այսօր ցնծոցէ՛ք
Ընդ մեծապայծառ փառան Սեպուհոյ,
Քամոյի ի նմա քնակեցաւ:
Սուրբն Գրիգորիոս, Սիւն Լուսոյ...»

Դուն լոյս ես, ո՛վ «վարդ կարմրերփեան», թէեւ «ի փշարեր» արմատէն ծաղկեցար. բայց՝ ո՛չ գիհիին փորոգը, ո՛չ ալ Մանեայ այրը, ասոնք չեն Քու չիրիմդ. սիրտերու մէջ կը հանգչիս, դուն ու չեա մեռած: Աննման կեանքդ, աննման գործունէութիւնդ անմահ են Ամենամեծ Լուսաւորչին՝ Բրիստոսի անունով հիմնած Եկեղեցիիդ մէջ:

Տիպար Հովիւն ես, անվկանդ Քարոզիչը, անխոնջ Վարդապետը, արթուն Հայրապետը. Ծնունդդ ու Մնունդդ համակ լոյս, եւ ԼՈՒՍԱԻՈՐԻՉԸ մեր Եկեղեցիին:

Օրհնեա՛լ ըլլայ գործդ. օրհնեա՛լ յաւատկդ ալ:

ԲԱՅԳԷՆ ՎԱՐԴ,

* *

Օրոսան տանին առթիւ գերազանցօրէն շահեկան եւ չրահանգիչ պիտի ըլլայ հետեւեալ ուշագրաւ հաստատութիւնը՝ օրոսան գիրքէն, Ամեն. Օրմանեան Սրբազանի Հայ Եկեղեցիէն, զոր հեղինակը Ֆրանսերէն քնագրէն Հայերէնի վերածելով հրատարակեց վերջերս, ինչպէս ծանուցիմք արդէն : Արդարեւ դիւրահասկընալի է որ Հռոմի Պապին կողմէ արգելքի (index) ենթարկուէր միջազգային Կրօն. գրականութեան մէջ կարեւոր տեղ մը ունեցող (*) այդ հոյակապ գործը, ուր հզօր փաստերով կը հաստատուի Հայ Եկեղեցւոյ առաքելականութիւնը :

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ս. Գրիգոր ինքնին նշանակուած էր Հայոց Եկեղեցւոյ պաշտօնաւարը, իւր ինքնաշատ սուրբ երախտիւրին եւ կատարած մեծ գործունէութեան հետեւանօք : Ուստի բնական կերպով այդ աստիճանին կոչուեցաւ թագաւորին ու ազգին կողմէ, իսկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ստացաւ 302ին, Կեսարիոյ Կապադովկացւոց արքեպիսկոպոս Ղեւոնդիոսի ձեռքէն : Եղեղութիւնը պատմագիրներով եւ ազգային աւանդութեամբ հաստատուած է : Միայն թէ այդ ձեռնադրութիւնը առիթ տուած է զանազան վիճաբանութեանց, անոր նշանակութիւնը, այսինքն Հայաստանեայց աթոռին Կեսարիոյ աթոռին հետ ունեցած յարաբերութիւնները ճշդելու տերակէտէն : Յոյներուն կարծիքով, թէ՛ Հայոց աթոռը Կեսարիոյ աթոռին ենթարկուած էր, եւ թէ հինգերորդ դարու մէջ անոնց իրարմէ բաժնուիլը՝ պարզապէս հերձուածի հետեւանք եղած է : Լատիններուն կարծիքով ալ, Հայոց աթոռը թէպէտ սկիզբէն Կեսարիոյ աթոռին ենթարկուած էր, բայց յետոյ ինքնազուլուս աթոռ հռչակուեցաւ : Սեղբւարոս Ա. պապէն արուած առանձ-

նաշնորհութեամբ : Հայոց տեսութիւնը ոչ մէկն է եւ սչ միւսը : Անոնք իրենց աթոռը առաքելական հաստատութիւն մը կը ճանչնան, իւր ծագումէն ինքնուրոյն, եւ իւր սկիզբէն ինքնագուլուս եղած ու նոյնպէս ալ շարունակած որովհետեւ, ինչպէս բայատեղիք, Հայոց աթոռը ոչ թէ սկզբնաւորեցաւ, այլ վերանորոգուեցաւ : Ս. Գրիգորի ձեռքով, եւ Կեսարիայէ ձեռնադրութիւն ընդունած ըլլալը, երբէք նուիրապետական կախում ունեցած կամ անոր ենթարկուած ըլլալու փաստ մը չէ :

Անոնք որ կ'աշխատին Հայաստանը իբր Կեսարիոյ ենթարկուած վիճակ մը ցուցնել, կ'ենթադրեն թէ Հայաստանի մէջ սկսած առաքելական քարոզութիւնը վաղանցուկ երեւոյթ մը եղած է, որ հետք թողած չէ, եւ նոյն իսկ առաքելներուն մահուամբ վերջացած է : Կր կարծեն եւս թէ Ս. Գրիգորի քարոզութիւնը պարզապէս Կեսարիոյ աթոռին կարգադրութեամբ կատարուած է, եւ թէ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ առաջին անգամ չորրորդ դարուն մէջ հաստատուած է : Բայց մեր յառաջ բերած պատմական յիշատակները եւ անոնցմէ քաղած հետեւութիւնները հակառակը կը հաստատեն, եւ պէտք չիկարծենք անոնց նորէն կրկնել այն փաստերը, որոնցմով հաստատեցինք Լուսաւորիչէ առաջ Հայաստանի մէջ քրիստոնէութեան տարածուած ըլլալը : Որչափ ալ մեր յառաջ բերած յիշատակներուն վերայ դիտողութիւններ ըլլան, գոնէ աւանդական պատմութեան մը հիմը ունին : Մինչ հակառակը պնդողներ ոչ մի յիշատակութիւն չունին իրենց կարծիքը հաստատող, եւ լոկ մտալածին ենթադրութիւններով կը խօսին, Հայոց Եկեղեցւոյ առաքելականութիւնը ուրանալու մարմաջէն ազդուած :

Իսկ Սեղբւարոսէ տրուած կարծեցեալ առանձնաշնորհութեան ենթադրութիւնը կը հիմնուի իրաւակիրներու ժամանակ Հայերու կողմէ յորհուած կեղծ գրուածի մը վրայ, որ Դաշակեց քուղի անունով ճանչցուած է : Այդ գրուածին նուազապէս եղած է Հայոց աթոռին անկախութիւնը կամ

(*) L'Eglise arménienne Ֆրանսերէն բնագրէն զատ Անգլիերէնի Թարգմանեւելով կը հրատարակուի արդէն Նիւ-Եօքքի Armenian-ին մէջ՝ անոր համակրի խմբագիր Տիար Արշակ Մանտեսեանի կողմէ, որմէ անշատաւար Լոնտոնէն ալ առաջակ եկած է Անգլիերէնի Թարգմանելու : Նոյնպէս հեղինակին հաւանութիւնը խնդրուած է Թուսիայէն՝ ռուսներուն ալ ծանօթացնելու այդ գործը՝ իրենց լեզուով :

ինքնագլխութիւնը պաշտպանել, առանց պապութեան անձնասիրութիւնը վերաւորելու, որպէս զի միեւնոյն ատեն հնար ըլլայ ինչակերներուն օգնութիւնն ունենալ, իրենց կիլիկեան թագաւորութիւնը պաշտպանելու համար: Արդէն բոլոր պատմական, ժամանադրական, քննադատական եւ լեզուաբանական հանգամանքներն ալ, համաձայն կերպով կը հաստատեն նոյն գրութեան կեղծ ու սուտ ըլլալը, որ այլ եւս իրեն նպաստաւոր պաշտպան մըն ալ չունի: Հայոց աթոռին սկզբնական եւ կատարեալ անկախութիւնը, զոր Հայ Եկեղեցւոյ բոլոր հայրապետներն ու մատենագիրները շարունակ եւ համարձակաբար հռչակած են, ուրիշ հանգամանքներով եւ տեսութիւններով ալ կը հաստատուի:

Յայտնի է թէ Հռոմէական կայսերութեան սահմաններուն մէջ, պատրիարքներու եւ մետրապոլիտներու փոխադարձ յարաբերութեանց եւ իրաւասութեանց սահմանները, կատարելապէս կուսակալներու եւ կառավարիչներու քաղաքական կազմակերպութեան վրայ ձեւուած են: Երկու իշխանութեանց, այսինքն քաղաքականին եւ եկեղեցականին կազմութիւնները, իրարու կատարելապէս նման եւ ճշգրիտ համահաւասար են: Այդ գրութեան հետեւանքով այն ամէն երկիրները, որ կայսերութեան գաւառներուն շարքին մէջ չէին, եւ կայսերութեան մաս չէին կազմեր, Յունահռոմէական սահմաններուն մէջ գտնուող պատրիարքութեանց ալ կազմակերպութիւններէն դուրս մնացին: Այս կերպով կազմուեցան Հայոց եւ Պարսից եւ Եթովպացւոց անկախ աթոռները, որոնց երկիրները կայսերական սահմաններէն դուրս կը մնային:

Կեսարիոյ կամ Պոնտոսի եքսարքութեան ներքեւ կը գտնուէին Հայք անուանով երկու միաբապտիստութիւններ, Առաջին Հայք կամ Սեբաստիա, եւ Երկրորդ Հայք կամ Մելիտին, որոնք կատարելապէս Կեսարիոյ արքեպիսկոպոսին իրաւասութեան ներքեւ էին: Այդ Հայք կոչումն է, որ առիթ տուաւ երբեմն անունները իրարու չփոխելու, եւ Առաջին ու Երկրորդ

Հայքը, Մեծ Հայք եւ Փոքր Հայք գրելու: Այդ անուններու փոխանակութիւնէն առաջ եկած չփոխութիւնը յայտնի կերպով կը հաստատուի, երբոր Պատրիարքեանց տեղեկութիւններ կոչուած եկեղեցական ցանկերը՝ Գաւառաց ցուցակներ կոչուած քաղաքական ցանկերու հետ բաղդատութեան դրուին:

Կեսարիոյ աթոռն ալ, ինչպէս նաեւ Անտիոքի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութիւններն ալ, ոչ մի պարագայի մէջ, բուն Հայաստան կոչուած սահմաններու վրայ երբէք իշխանութեան կամ իրաւասութեան գործ մը կատարած չեն: Կեսարիոյ արքեպիսկոպոս Ս. Բարսեղի թուղթերուն մէջ ալ Հայոց նկատմամբ տեսնուած ակնարկութիւններ կամ կարգադրութիւններ, յայտնապէս Նիկիպոլսոյ եւ Սատաղայի եպիսկոպոսութեանց կը վերաբերին, որոնք Պոնտոսի եքսարքութեան ենթարկուած Առաջին եւ Երկրորդ Հայոց մէջ կը գտնուին, եւ ոչ թէ Մեծ Հայոց սահմանին մէջ:

Այս տեսութիւններէ զատ, պէտք է նաեւ գիտնել, որ եթէ չորրորդ դարուն սկիզբը եւ Նիկիոյ ժողովէն, այսինքն ՅՁԵՆ առաջ մեծ աթոռներու մէջ տիրող եկեղեցական յարաբերութեանց պատմութիւնը խզճամիտ կերպով սւտումնասիրենք, պիտի տեսնենք որ երբէք նշան մը կամ յիշատակութիւն մը չկայ, որով մէկ աթոռին՝ միւսին գործելուն միջամտելուն ենթադրութիւնը արդարանայ: Այս բանն ալ բնաւ զարմանալու կէտ մը չէ, որովհետեւ իւրաքանչիւր եկեղեցական շրջանակ խոտիւ սահմանափակուած էր իրեն համապատասխանող եւ իրեն կազմակերպութեան հիմը կազմող քաղաքական շրջանակով:

Ուրիշ կողմէ ալ գիտենք որ չորրորդ եւ հինգերորդ դարերու մէջ չյիշուիր հաստատ եղելութիւն մը, որով Հայաստանի եւ Կեսարիոյ աթոռներուն յարաբերութեանց մէջ փոփոխութիւն մը անդի ունեցած ըլլայ: Այդ որեւէ յիշատակութեան բացակայութիւնը իրաւունք կուտայ եզրակացնելու, թէ ինքնագլխուէն

կախութեան ձեռք որ մշտապէս կերպով կ'երեւայ, ոչ թէ յետագայ պարագայով մը սկսած է, այլ իր ծագումն ունեցած է նոյն իսկ նուիրապետութեան սկզբնաւորութեան օրէն, եւ միեւնոյն կերպով պահուած ու շարունակած է Հայ Եկեղեցւոյ վարչութեան մէջ:

Իրօք ալ ինչ որ ասոր հակառակ կըրցան ըսել հակառակ կարծիքը պաշտպանողներ, պարզ ենթադրութիւններէն անդին չանցնիր: Անոնք կը հիմնուին այն տեսակ ձեւակերպութիւններու վրայ, որոնք տեղի չունէին նախկին դարերուն մէջ, որոնց վրայ կը խօսինք, այլ յետագայ դարերուն մէջ երեւան եկած նորութիւններ են: Ինչ ինչ փոփոխութիւններ տեղի ունեցան Բիւզանդական ախրապետութեան Հայաստանի վրայ տարածուած աստիճան, եւ կամ իրաւաւորութեան արշաւանքներուն ազդեցութեան ներքեւ, եւ ավանդութեան յարաբերութիւններն ալ այլայլեցան. բայց այս պատահարները չէին կրնար եւ չկրցան յետագարձ ներդրութիւն մը ունենալ, եւ ոչ ալ հնար է առաջին դարերու եղելութիւններուն իսկութիւնը՝ յետին դարերու եղելութեանը վրայ ձեւել:

Հետեւաբար Ս. Լուսաւորչին Կեսարիայ արքեպիսկոպոսէն ձեռնադրութիւն ընդունիր, պէտք է որեւէ պատահական պարագայի վերագրել որ իրաւական կամ իրաւասական նշանակութիւն մը չունի: Թերեւս նոյն ինքն Ս. Լուսաւորչին անձնական մի փափաքէն յառաջ եկած է, քանի որ Կեսարիոյ մէջ եղած էր անոր դատարարակութիւնը: Իսկ այս պարագան չկրնար երբէք ծառայել իբրեւ եկեղեցական յարաբերութիւնները ճշդելու որոշ փաստ մը:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻՒՈՎ

ԱՐԻԻՆ ՈՏ ՎԵՐԱՐԿԻ ՈՒՆ
(Խոյրի խղիճաբար սպաննուած Տ. Սարգիս Բախանայի յիշատակին)

Դրեց ՍՈՒՐԵՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ
Առաջնորդ Բաղէշի

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Ե Փ Ր Ե Մ

Ա.

Եղեսիոյ Պարսից Դպրոցին եթէ ոչ հիմնադիրներէն, գէթ բազմաշխատ վատակաւորներէն մէկն է նաեւ Ս. Եփրեմ Սրբա Խորին Ասորի, որ ժամանակի կարգով Բարդաճանէն յետոյ կուգայ տարիներով զատախօսած ու զատախարակած է ամբողջ սերունդ մը եւ կարեւոր տեղ մ'ունի Դ. Դարու Ասորական մատենագրութեան պատմութեան մէջ, եւ ինքն ալ իր գրչոյն ու գաղափարով անհամեմատ կը մնայ Ասորի Եկեղեցւոյ Հայրերուն շարքին մէջ:

Հայկական Ոսկեդարը նախորդող Դ. Դարը որ նշանաւոր եղած է Հայ. Եկեղեցւոյ կազմակերպութեան տեսակէտով, եղած է միանգամայն Ասորական մատենագրութեան Ոսկեդարը. «Այս Դարուն գրական փառքը եղաւ համբաւաւոր Ս. Եփրեմ, կ'ըսէ Ռ. Տիւլալ, Հակոտակայն պայծառ շողջողումին որով փայլեցաւ Ասորական Եկեղեցւոյ այս Ս. Հօր անունը, նոյն իսկ իր կենդանութեան ատեն, նուազ ստոյգ տեղեկութիւններ ունինք իր կիանքին նկատմամբ զոր կը թուի անցուցած ըլլալ աւելի խոնարհ ճգնաւորութեան մէջ(1)»:

Արդարեւ դժուար պիտի ըլլար ճշգրիտ կերպով պատկերացնել այս հոյակապ մատենագրին կեանքն ու գործերը, եթէ օտար լեզուներով խմբագրուած քանի մը գրչագիր յիշատակարաններ չհասնէին մեր ձեռքը, որոնք այս Ասորի Հօր կեանքին ու գործերուն քանի մը հակիրճ դիմերը կը բովանդակեն: Այս գրչագիրներէն մին է Des Actes, որ կը գտնուի Բարիզի ազգային մատենադարանին մէջ. միւսն է Վատիկանի ձեռագիրը: Այս երկու ծանօթ խմբագրութիւնները շատ մը կարեւոր կէտերու վրայ կը տարբերին իրարմէ, եր-

(1) Sba R. Duval, Hist d'Edesse, էջ 150-151:

կուքն ալ թուականներով աղքատ են: Ըստ Տիւվալի, Բարիզի աղգային մատենադարանի ձեռագիրը աւելի նախնարեւի եւ ամբողջական է քան Վատիկանի ձեռագիրը. երկուքն ալ ճոխացած են անհետօրինակ եւ հրաշքներով(1):

Ս. Եփրեմ ծանօթ է բոլոր քրիստոնեայ եկեղեցիներուն, «Խորին Ասորի» անունով: Թէ ի՞նչ կը նշանակէ «Խորին Ասորի»։ Հ. Մկրտիչ Աւգերեան նոր Հայկազեան բառգրքին մէջ այսպէս կը ստուգաբանէ, «Սրբայն Աբգայ Եփրեմի խորին կամ խորին այսինքն վերծանողի Ասորւոյ»։ Դարձեալ նոյն բառգրքին մէջ կը հանդիպենք «խորի» կամ «խուրի» բառին որ ծագում առած է Արաբերէն Բուրբա. Բարբա. Գառի. = Գրաքթի, այսինքն քաջ վերծանող, ընթերցող եւ մեկնիչ գրոց։ Նոյնպէս Հ. Գ. Զարբ. կը գրէ «խուրին» կամ «խուրի Ասորի» անշուշտ Աւգերեանի հետեւողութեամբ(2)։ Սակայն բազմահմուտ Նորայր Բիւզանդացի հերքելով թէ՛ Աւգերեանի եւ թէ Զարբեանէլեանի Արաբական ստուգաբանութիւնը, կ'աւելցնէ. «Խորին Ասորիք որ Յոնարէն կեղի սիրիա (գլ. coelé syrie կամ syrie creuse) բառին թարգմանութիւնն է։ Ասորւոց աշխարհին մէկ մասն էր հովտաձեւ երկիր մը՝ տարածուած Լիբանանու եւ Անտիլիբանանու (գլ. Anti-liban) հաստաձաւին մէջ (հմտ. Կորիւն վարդ. եւ Նորին թարգմ. էջ 403) «Եւ անտի դարձեալ եմուտ Բուստր քաղաք Խորին Ասորւոց» (տես Սովերք Հայկ. ԺԺ. էջ 13)։ «Խորին Ասորիք Միջագետաց Դամասկոս եւ Հալապ» (հմտ. Միխայէլ Ասորի էջ 396-397) «վասն որ ինչ գործեցաւ ի

կողմանս Միջագետաց եւ Խորին Ասորւոց» (տես Կիր. Գանձակեցի էջ 227)։ Եւ այս բոլոր տուումները (donnée) անգամ մ'եւս իրաւունք կուտան Նորայր Բիւզանդացւոյ՝ հաստատելու իր պաշտպանած քեզր. որ կ'եզրակայնէ սա բառերով. «Խորին կամ Խոր Ասորի կը կոչուի ծնեալն ինմին աշխարհի. ինչպէս «Խորին Երրայեցի» (տես Գէորգ Սկեռացի մեկն. դործք. Առաք. ԻԱ. էջ 185) որ կը նշանակէ յունարէն ոճով քուն կամ ճշմարիտ Երրայեցի (հմտ. Կորիւն վարդ. եւ Նորին թարգմ. էջ 404). ասանկ ալ կրնանք բռնի «Եփրեմ Խորի Ասորի» կամ Եփրեմ քուն Ասորի։

Թէ ո՛ւր ծնած է Եփրեմ. Այս մասին ալ կը տարբերին պատմագէտներու. Կործիքներու Հ. Գ. Զարբ. Սիրիոյ Եդեսիա քաղաքը կը նշանակէ իրեւ ծննդավայր Ս. Եփրեմի։ Բայց հմուտ ասորագէտ Տիւվալ գաղղիային որ Ասորական ամբողջ մատենագրութիւնը ուսումնասիրած է առանձին հատորներով, Ս. Եփրեմի ծննդավայր կը նշանակէ Նիզիպ քաղաքը որ կը գտնուի Եդեսիոյ մօտ դէպի հարաւ։ Արեւելք, Կորդուաց լեռներուն ստորոտը(1)։ Այս վերջնոյն կարծիքը աւելի ստուգութեան մօտ է. զի Աւգիլ կամ Ապիլ կուոր որուն քաւմն էր Եփրեմի Հայրը, կը գտնուէր Նիզիպի մէջ. եւ զայս կը հաստատին կարգ մը կարեւոր ձեռագիրներ, որոնք կը գտնուին եւրոպական մատենադարաններու մէջ (տես Վատիկանի ձեռագրին Ապիլի բառը)։

Ս. Եփրեմի ծնողքը բարեպաշտ եւ ընտիր տոհմէ սերած էին, որոնք թէպէտ նիւթական մեծութիւն եւ հարստութիւն չունէին, բայց հաւատքով անուանի եւ հռչակուած էին, որովհետեւ այս տոհմէն ալ եւ ալ անձինք Դիոկղետիանոսի քրիստոնէից դէմ հանած հալածանքին ատեն քաջութեամբ վկայիւ էին եւ ճշմարիտ

(1) Եփրեմի կենսագրութեան խիստ հսկիւրճ մէկ ամիսօրումը կը գտնուի նոյնպէս Պերլէնի մատենադարանին մէկ ձեռագրին մէջ (coll. Sachau. N. 165 fol. 6), ուրկէ օգտուած է Մ. Lamy իր «S. Ephraemi syri hymni et sermones» անուն գործին հրատարակութեան առթիւ։

(2) Տես Եղազս Բարեխոս սրբոց, Ս. Ղազար 1852 էջ 90 206 հմտ. Մանդր հայկ. հին թարգմ. էջ 443. Բայց Հ. Ղ. Ալիշան սրբագրելով կը գրէ խորին։ Տես Արարատ էջ 497 ծան 1։

(1) Տես Մ. Ուռնայեցի էջ 224. 297. և 515։ Նիզիպ միշտ ի զուր շփոթուած է Միջագետքի Մծրին (=Նսիպին) քաղաքին հետ. կ'ըսէ բանասէր վարդապետ Տ. Բարդէն եպիսկ. Կիւլէսէրեան (հմտ. Ծովք Ծլուք և Հռոմկլայ, էջ 59)։

մարտիրոսական մահուամբ պսակուեր, կ'ըսէ Ռընան (Մարկոս-Աւրելիոս) Անոր ծնողքը Եփրեմ կամ Եփրայիմ (Ասորերէն էֆրայիմ, մօտն է Իսրայիմ= Աբրահամ) դրին իրենց զաւկին անունը, որ կը նշանակէ պսղաքեւ. որովհետեւ իր ծննդենէն քիչ ետքը ըստ աւանդութեան տեսիլք տեսան որ մանկան բերնէն որթ մը դուրս կ'ելլէր, վրան լեցուն պտուղներով. այս որթը աճելով բոլոր իր երկիրը ծածկեց, եւ ամէնքը կուգային անոր պտուղներէն ուտելու(1):

Անշուշտ այս աւանդական անեֆօքք քիչ մը անմարսելի է արդի բանաքննաքնական մտքերու, որոնցմէ Տիւլալ աւելորդ նկատած է իր քննական ուսումնասիրութիւններուն մէջ անպարագանալու այս կարգի տեսիլքներու կամ հրաշքներու. վրայ, որոնք անբաժան մաս կը կազմեն սուրբերու կեանքին, լաւ համոզուած ըլլալով որ Արեւելեան երեւակայութիւնը միայն կրնայ ծնունդ տալ ատոնց :

Ս. Եփրեմ, ըստ des actesի, ծնած է Մեծն Կոստանդիանոսի ատեն եւ մկրտուած տասներութ տարեկան հասակին մէջ, եւ ըստ Վատիկանի ձեռագրին, քրտանութը տարեկանին, եւ հետեւած է Նիզիպի (Մծրին) Յակոբ եղիսկոպոսին, ներկայ ըլլալով Նիկիոյ ժողովին (325) : Առաջին թուականը մեզ կը ստիպէ Ս. Եփրեմի ծնունդը տանիլ Կոստանդիանոսի իշխանութեան առաջին տարիներուն. գէթ 306 թուականին, ենթադրելով որ Եփրեմ դեռ քրիստոնեայ եղած չէր Նիկիոյ մեկնելէն տարի մը առաջ : Սակայն եթէ ընդունինք Վատիկանի ձեռագրին տեսակէտը, որուն համեմատ Եփրեմ քսան եւ ութ տարեկան հասակին մէջ ընդունեց քրիստոնէութիւնը, այն ատեն Նիկիոյ ժողովին ներկայ ըլլալու պարագան խնդրական կը մնայ, քանի որ զեռ քրիստոնեայ եղած չէր, եւ չէր կրնար քրիստոնեայ Սիւն-հոգոսի մը մասնակցիլ, ինչպէս կ'ուզէ հաս-

տատել Գերմանացի հմուտ Արեւելագէտ Նէօլդէքէ.(1) վասնզի իր գրութիւններուն մէջ, Եփրեմայս ժողովին կատարած զերին նրկատմամբ ոչ մէկ ակնարկութիւն կրնէ :

Թէեւ քննադատները կը տարակուսին իր մանկութեան մասին կարծիք մը յայտնելու, բայց Ասորական աւանդութիւնը ճոխ եւ այլազան է այս մասին, մանաւանդ երբ իրողութիւնները հրաշալի երեւոյթներով զարդարել հաբկ ըլլայ :

Այսպէս Եփրեմ իր մանկութեան օրերուն ծնողացը ապրուստ ճարելու համար հետեւած է խաչնագարմանութեան արհեստին. անշուշտ հարուստներու հօտերը աւրածելով, քանի որ իրենք աղքատ էին : Օր մը հօտին մէջէն ոչխար մը կորսուեցաւ, տէրը կարծելով թէ Եփրեմն է յանցաւորը, առանց մտիկ ընելու անոր որ կը ջանար ինքզինքը արդարացնել, բանտարկել տուաւ զայն, եւ եօթնասուն օր բանտին մէջ ի զուր տառապեցաւ. Եփրեմ, Այս միջոցին այլ եւ այլ տեսիլք եւ երկնային յայտնութիւն ունեցաւ, որով իր պատանկութեան շատ մը տարակոյսները լուծուեցան, եւ հասկցաւ թէ ինչ աստիճան սրտի սրբութիւն կը պահանջէ Աստուած անոնցմէ որոնք իրեն ծառայութեանը կը փախաբն : Եփրեմ կատարելութեան փախաբով վառուած, բանտէն ելնելուն պէս անապատին մէջ առտնաւորացաւ, ուր ինքզինքը հակու մի, որոնք եւ ապաշխարութեան տուաւ. (Հ. Գ. Զարբ. պատմ. ընդհ. Ազգ. մատեն. էջ 754-755) :

Արդի քննադատութիւնը Եփրեմի քրիստոնէութեան դառնալու պարագան ոչ թէ բանտի եւ կամ հրաշքի կը վերագրէ, այլ այն դիտակից համոզումին որ բնածին թափով մի արթնցած էր այս ատեն անոր մէջ. Ինչպէս յիշեցինք վերը թէ Եփրեմի հայրը Նիզիպի Ապղի կամ Ապնիլ ըսուած կուռքին քուրմն էր. ուղելով որ անշուշտ իր զաւակն ալ ջերմ երկրպագու մ'ըլլայ այդ անշունչ առարկային, ստիպեց զայն որպէսզի ինքն ալ մասնակցի Աստուածնեւրու մատուցուած զոհերուն. բայց երբ

(1) Հմմտ. Հ. Գ. Զարբ. պատմ. հին Ազգ. մատենագրութեան : (էջ 754-755) :

(1) Sieu Jotting Jetherte Anzeigen, 1885, P. 83:

անկարելի եղաւ յաղթել իր զաւակն դիմադրութեան, որ մը իր տունէն դուրս վաճառեց : Եւ իրեմ, այն ատեն դեռ պատանի, գիմնայ Նիզիպի Յակոբ եպիսկոպոսին որ ընդունելով զայն իր աշակերտներու շարքին մէջ մկրտեց եւ դաստիարակեց եւ ապա իրեն հետ տարաւ Նիկիոյ ժողովը :

Գ. ԴԱՊՊԵՆՃԵԱՆ

ՇԻՐՎԱՆՁԱՏԷԻ ԴԻՐՔԸ ՈՌԻՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Մ Է Զ(1)

Վիպական գրականութեան մէջ դուրս կը բերուի կեանքի այս կամ այն բեկորը՝ պատմութեան որ եւ է մէկ պահուն, երեւակայութեամբ ստեղծուած կեանք մը իր բազմաթիւ արտայայտութիւններով: Այստեղ կայ եւ՝ միջավայր, եւ՝ անձինք, եւ հագեցնողութիւն: Իր ընտրած նիւթի պատկերացման մէջ հեղինակը երեւան կուգայ երկու կողմով՝ մէկ իբրեւ արեւստագէտ եւ մէկ իրիւ հեղինակ: Միայն զրական տիտաններուն է տրուած այդ երկու կողմերու բարձրագոյն աստիճանը. միայն անոնք են, որ կարող կ'ըլլան համամարդկային, ազգային եւ խմբական այնպիսի գծեր նորսալ երեւոյթներու բազմապիսի ժխտէն, որոնք յատուկ են մարդկութեան, ազգի կամ խմբի բոլոր անհատներուն, հետեւաբար կը հանդիսանան խիստ բնորոշ՝ համապատասխան խմբակցութեան համար: Որքան հեղինակը իմացականապէս աւելի բարձր է, այնքան նա կարող կ'ըլլայ աւելի լայն ընդհանրացումներով երեւոյթներ դուրս կորզել կեանքի առերեւոյթ համայնապատկերէն: Բայց այդ բուական չէ, հարկաւոր է նաեւ գեղարուեստական տաղանդ, ստեղծագործող երեւակայութիւն, քիթերը ըմբռնելու հոստիւլութիւն, նկատածը պատկերացնելու ձիրք եւ արտայայտիչ ոճ ու լեզու: Այս երկու կողմերու անհամապատասխանու-

թեան է, որ մենք յաճախ կը պատահինք հեղինակներու՝ գեղարուեստական խոշոր ձիրքով, բայց դատարկ բովանդակութեամբ, կարողութեամբ, ունեցածը պատկերացնելու անկարող:

Եթէ մենք Շիրվանզատէի շոշափած հարցերը եւ նկարած քիթերը համեմատելու ըլլանք իր նախորդներու կատարածի հետ, մենք կը գտնենք, որ Շիրվանզատէն այս ասպարէզին մէջ չէ տուած այնպիսի բան մը որով նա անպայման գերազանցէր իր բոլոր նախորդները, ինչպէս նա կը գերազանցէ վերը շոշափած երկու միւս հարցերուն մէջ: Շիրվանզատէն չէ տուած մեզ այնպիսի հերոս մը որ քիթական ներկայացուցիչ հանդիսանար խոշոր հոսանքի մը կամ խոշոր ուրիշ երեւոյթի մը: Օրինակ՝ Շահազիզի Ղեւոնդ, չնայած իր բոլոր պակասութիւններուն, իրմով կը պատկերացնէ մեր վաթսուական թուականներու ազատատական երիտասարդութեան մէկ օրինակը, որ դեռ եւս՝ երեւոյթները դիտելու եւ քննադատելու շրջանի մէջ կը գտնուի, մի հարազատ պատկեր մեր այն ժամանակուան կեանքի պայմաններուն: Բաֆֆին մեզ տուաւ իր «Ջալալէդդին»-ի, «Խենթ»-ի, «Նայծեր»-ը՝ հերոսները, որոնք թէեւ ոչ իրական, իրենց ժամանակէն աւելի կանուխ ծնած, բայց կը հանդիսանային արտայայտութիւն՝ հուժկու հոսանքի մը, հակայական շարժումի մը, որ Հայութեան կեանքին մէջ իր խոշոր պատմական դերը ունէր: Ասոնք կերպարանքներ են, որոնք հարազատ արտայայտիչներ են որոշ ժամանակաշրջանի մը մէջ իշխող տրամադրութեան, ներկայացուցիչներ են որոշ հոսանքներու, որոնք կը պատկերացնեն մեր կեանքի այս կամ այն, ոչ փոքրիկ եւ մասնաւոր, այլ խոշոր հասարակական բեկորը: Շիրվանզատէն չունի այնպիսի հերոսներ: Միակը այս տեսակէտէն՝ անոր Գիմաքսեանն է, որ մեր 70-80ական թուականներու ազատական ինքնիշխանացիայի տիպարն է. նա, ինչպէս վերեւ ըսի, պիտի ըլլար Շահազիզի Ղեւոնդ, որ արդէն խօսքէն գործի է անցած:

(1) Շար. 23րդ թիւէն եւ վերջ:

Բայց այն գեղարուեստական խոշոր սխալը զոր Շիրվանզատէ գործեց այս վէպին մէջ, թողուց այդ քիթը անկատար. այդ իսկ պատճառով Գրիմաքսեան չհանդիսացաւ ուսուցիչ և դաստիարակիչ իր ժամանակակիցներուն: Ոչ ոք պարծանքով չըսաւ. — «Գրիմաքսեանը, ահա իմ իտէալը, ես պիտի հետեւիմ անոր, պիտի վարուիմ անոր պէս», — այնպէս, ինչպէս այդ կ'ընէին Բաֆֆի իտէալ քիթերու նկատմամբ, ինչպէս Պիսարոն, և 60ական թուականներու ռուս երիտասարդութիւնը այդ կ'ընէ Թուրկենէֆի Բազարովի նկատմամբ, կամ ինչպէս նորագոյն ժամանակներուն որոշ իմրեր Արցիբաշեւի Սանինի նկատմամբ: Այդ միակ անյաջող փորձէն զատ, Շիրվանզատէ չունեցաւ կարողութիւն ժամանակաշրջան պատկերացնող քիթեր ստեղծելու: Հոգեբանական քիթեր իսկ նա չտուաւ, այնպիսի լայն եւ խոր պատկերացումով, որ անոնց վրայ կարելի ըլլար ուսումնասիրութիւն կատարել, ինչպէս իրական մարդկանց վրայ: Անոր քիթերէն ոչ մէկը հասարակ անուն չգարձաւ, ինչպէս Բաֆֆի Տէր-Թօգիկը և Քաւոր Պետրոսը:

Հարցի իմացական կողմէն անոր գեղարուեստականին անցնելով, պէտք է նկատել, որ չնայած Շիրվանզատէի քիթերը և տեսարանները հանգամանօրէն նկարագրած լինելուն, չնայած անոնց բարեխիղճ ուսումնասիրուած լինելուն, այնուամենայնիւ անոնք չունին այն պայծառ պատկերաւորութիւնը, զոր մենք կը գըտնենք գեղարուեստական խոշոր տաղանդներու գործերուն մէջ, որոնք վրձինի մէկ քանի հարուածներով իսկ կարող կ'ըլլան մեզ տալ կենդանի կերպարանք ցանկալի երեւոյթի: Անոր հրդեհը «Քաօս»ի մէջ, և գինեաղանները «Արտիստ»ի մէջ, կտորներ են որոնք պատիւ կարող են բերել ոչ միայն իւրաքանչիւր հայ, այլ և շատ ու շատ ռուս և եւրոպացի հեղինակներու. բայց ատոնք չունին այն վեհ պարզութիւնը, ինչ որ մենք կը գտնենք Աբովեանի երկի որոշ կտորներուն մէջ. այստեղ ձմեռը, ամառնային տօթը, փեղ-

խուղաներու գնացքը եկեղեցիէն դէպի տանուտէրի տունը, կտորներ են, որոնք իրենց պարզութեամբ, պայծառութեամբ, վրձինի փոքրաթիւ բայց շեշտակի և զօրաւոր հարուածներով Դոլսդօյի գրչին արժանի են:

Բայց չնայած այս հանգամանքին, Շիրվանզատէ կը գերազանցէ իր նախորդները՝ իր ստեղծագործական տաղանդի վերոյիշեալ երկու կողմերու համաչափ զարգացումով: Եթէ Բաֆֆին իր քիթերը օժտած է աւելի հանրական գծերով, բայց նա այն պակասութիւնն ունի, որ տուած է անոնց միայն արտաքին նկարագրութիւնը. ներքին հոգեբանական կողմը կամ բոլորովին անտեսելով կամ անյաջող պատկերացնելով: Շիրվանզատէն մեզ կուտայ իր քիթերը թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ:

Նայնիսկ լեզուի և ոճի տեսակէտէն նոյնը պիտի ըսեմ Շիրվանզատէի և իր նախորդներու յարաբերութեան նկատմամբ: Նա չունի ո՛չ Աբովեանի լեզուի ճոխութիւնը և անվերջ պէսպիսութիւնները, ո՛չ Աղայեանի և Պաօշեանի հարուստ և մաքուր հայերէնը, ոչ ալ Բաֆֆի լայն եւ հիւթեղ վիպասանական ոճը եւ լեզուն. բայց այդ բոլորին փոխարէն Շիրվանզատէն մեզ կուտայ լեզուն մը որ թէեւ վերոյիշեալներու լեզուական այս կամ այն տոռնձին բարձր յատկութեան չի հասնիր, բայց ատոր փոխարէն իր ունեցած յատկութիւններով հաւասարապէս գորգացած է ամէն կողմէ:

* *

Այս համառօտ տեսութիւնը, հեռու գեղարուեստական քննադատութեան վերջին խօսքը ըլլալու յաւակնութենէ, — այդպիսի բան մը նոյնիսկ անհնարին է ժամանակակից հեղինակի մը մասին, որ գեռ կը շարունակէ արտագրել — այս տեսութիւնը, զոր շատ տեղերու մէջ հարկադրուած էի միայն պնդումներով բաւականանալ, առանց հնարաւորութիւն ունենալու ապացոյցներով և շատ օրինակներով զանոնք հաստատելու, սակայն շատ

ընդարձակ եղաւ լրագրական յօդուածի մը համար. ուստի կը բաւականանամ ըսածովս մեր յօքեղեարի մասին, իբրեւ վիպասանի, ամենեւին չըջափելով անոր գործունէութիւնը՝ իբրեւ թատերագիրու Ասոր համար ուրիշ գրական պատմական տեսութիւն և ուրիշ տեսակի փաստեր կը պահանջուէին:

Եթէ մեր վիպասանները, Աբովեանէն մինչև Էիրփանզաւէ, մեզ կը ներկայանան իբրեւ լեռնաշղթայ մը, ուրեմն ատոր մէջ մենք կը հանդիպինք գաղաթներու՝ այլ և այլ կերպարանքներով և գեղեցիկութեամբ. ատոնք մեծ մասամբ չունին համաշափ զարգացած ձևեր. ատոնցմէ մէկուն՝ մէկ կողմէ, ուրիշի մը ուրիշ կողմէ ժայռ մը ցից բարձրացած կ'իջխէ անոնց բոլոր մասերուն վրայ. ատոնցմէ ոմանք մէկ կողմէ երեւան կը բերեն ձոխ բուսականութիւն՝ վճիտ ու քջքան աղբիւրներով, իսկ միւս կողմէ աւազուտ անապատ են: Բայց ատոնց մէջ կայ խոշոր բլուր մը, ծաղկալից կանաչով ամէն կողմէ զարդարուած, իր մասերու և ձևերու համաչափութեամբ և ներդաշնակութեամբ մարդուն աչքը և ուշքը գրաւող, նա չունի խոշոր վեհաշուք մասեր, բայց նա ներդաշնակութիւն է, և մարդ հաճոյքով իր աչքը կը հանգստացնէ անոր վրայ:

Ատիկա Էիրփանզաւէն է: (*)

ՄԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ(1)

Ա.

— Ըսէ՛ ինծի վերջապէս, թէ ինչպէս կը յաջողիք ամենուն հայթայթել ինչ որ կրնայ ձեզմէ սպաննջել, հարցուց Յուլիոս: Գիտեմ, աւելցուց, թէ իմ հայրս եթէ իւրաքանչիւր անձի չնորհէր ամէն

(*) Արտագրուած Տփղիսի Հոբեգոնէն և Թրքահայ բարբառի վերածուած: Ծ. ԽՄԲ.

(1) Շար. տես Թիւ 22-23:

ինչ որ կը պահանջէ կամ կը բաղձայ, շատ չանցած ծնած օրուան չափ աղքատ պիտի ըլլար:

— Չգիտեմ, պատասխանեց Պամփիլիոս, եւ սակայն միշտ կ'ունենանք բոլոր մեզի պէտք եղածը: Եթէ պատահի որ ուտելիք կամ հագուելիք բան մը չունենանք, ուրիշներէն կ'ուզենք պակսածը, եւ անոնք չեն մերժեր բնաւ, բայց ատիկա խիստ հազուադէպ կերպով կը պատահի. իմ մասիս, մէկ անգամ միայն առանց ճաշելու պառկեցայ, եւ ատոր պատճառն այն էր որ այն իրիկունը շատ յոգնած էի, եւ տրամադիր չէի երթալ մերիններէն մէկը փնտռելու՝ ուտելիք խնդրելու համար:

— Իրաւ որ չեմ հասկնար թէ ի՞նչպէս կը կարգադրէք այդ ամենը, ըսաւ Յուլիոս: Բայց հայրս կը հաւատէ որ եթէ ուշադրութեամբ չհսկէր իր ստացուածքներուն վրայ, եւ եթէ ողորմէր բոլոր ներկայացող մուրացիկներուն, ա՛լ ոչ տուն եւ ոչ ալ ընտանեկան յարկ պիտի ունենար, եւ անօթութիւնէ մեռնելու պիտի դատապարտուէր:

— Մենք անօթութենէ չենք մեռնիր, պատասխանեց Պամփիլիոս: Բայց պէտք է որ դուն անձամբ տեսնես ատիկա: Ոչ միայն մենք բանէ մը չենք զրկուիր, այլ եւ նոյն իսկ աւելորդն ունինք:

— Ի՞նչպէս կրնաս բացատրել ինձ ատիկա, ըսաւ Յուլիոս:

— Տեսէք թէ ինչպէս. մենք ամենքս ալ միեւնոյն օրէնքին կը հպատակինք, բայց այդ օրէնքը դործադրելու համար պէտք եղած ուժը անհունօրէն կը փոխուի, ոմանց քով շատ հզօր է, ուրիշներու քով շատ տկար: Այսպէս, մարդ մը կրնայ արդէն որոշ կատարելութեան մը հասած ըլլալ կեանքի մէջ բարիքին համար, մինչ ուրիշ մը տակաւին զրազելու վրայ է սկզբնական դժուարութեանց յաղթելու: Քրիստոսի կեանքը յստակօրէն կը գծուի մեզմէ վեր, եւ մեր յարատեւ ճիգերը կը ձգտին նմանելու Քրիստոսի: Հոգ է մեր երջանկութիւնը: Մեր համայնքին մէջ անձեր կան, ինչպէս մեր երէցը՝ Սիրիլ, որ մեր ամենէն աւելի յառաջացած են,

ուրիշներ կը մօտենան անոնց . ուրիշներ աւելի հեռու են , բայց բոլորս ալ միևնոյն ուղղութեամբ կը յառաջանանք , միևնոյն ճամբուն վրայ : Առաջիկաները գրեթէ նոյնացած են Յիսուսի օրէնքին , ամէն բանէ կը զրկեն ինքզինքնին եւ բանի մը պէտք չունին : Ինքզինքնուն վրայ չեն գլխար , եւ Քրիստոսի օրէնքին հնազանդելու համար յօժարակամ պիտի տային իրենց վերջին հագուստը : Հոգիներ կան՝ անոնցմէ նուազ սոսկուն եւ անձնագոյն , որոնք չեն կրնար ամէն բան լքանել առանց տխրութեան . ասոնք պէտք ունին աւելի եւս քաջալերուելու , սրտապնդուելու : Ասոնցմէ աւելի սկսանք ալ կան , որոնք առաջին քայլերը միայն առած են բարիքի ճամբուն մէջ : Ասոնք վաղուանը կը հուսն եւ խնայողութիւններ կ'ընեն , ինչպէս անցեալին մէջ , եւ իրենց աւելորդ միայն ողորմութիւն կուտան : Արդ , այս վերջապահ զինուորները կ'ապահովեն առաջին կարգին վրայ կոռուողներու նիւթական գոյութիւնը : Պէտք չէ նաեւ մոռնալ թէ մեր ազգականութեանց պատճառով չափազանց խառնուած ենք հեթանոսութեան : Մեր եղբայրներէն մէկը կուպաշտ հայր մը ունի որ կ'ապրի տակաւին : Այս վերջինը սեփականաւոր մըն է եւ թուշակ կը վճարէ զաւակին : Զաւակը՝ առած դրամը ողորմութեանց կը ծախսէ , եւ հայրն ուրիշ դրամ կը ղրկէ որոշեալ պայմանաժամուն : Ուրիշ մը հեթանոս մայր մը ունի , որ կը խղճայ զաւակին վրայ եւ կ'օգնէ անոր : Ուրիշ մայր մը քրիստոնեայ է եւ հեթանոս զաւակներ ունի : Ասոնք իրենց մօրը ապրուստը ապահովելու համար կը ցածնուն չափ դրամ կուտան անոր , եւ կը խնդրեն որ զայն ուրիշներուն չքածնուն : Մայրերնին կ'ընդունի դրամը իր զաւակներուն վրայ ունեցած սիրոյն համար , բայց երբէք չի կատարիր անոնց յանձնարարութիւնը : Կան նաեւ կիներ որոնց ամուսինը կուպաշտ է , եւ կամ հակադարձը : Այս է պատճառը որ մենք անանանցանելի բաւրջի մը մէջ կը գտնուինք : Առաջին կարգին վրայ գտնուողները երջանիկ պիտի նկատեն ինքզինքնին , եթէ իրենց հայրն

վերջին պատառը կամ հագուստի վերջին ծուէնը տան աղքատներուն . բայց ասիկա ընել չեն յաջողիր ըստ , որովհետեւ նուէրներն անսպառ են : Այս կերպով է որ տկարները շարունակ ուժ եւ կորով կը գտնեն հաւատքին մէջ , եւ այս իրողութիւնը կը բացատրէ թէ ինչո՞ւ մենք մեզի պէտք եղածէն աւելին ունինք :

Յուլիոս պատասխանեց .

— Եթէ այդպէս է , բացայայտ է որ դուք շատ կը հեռանաք Յիսուսի վարդապետութենէն , եւ երեւոյթը կը գնէք իրականութեան տեղ : Եթէ դուք ամէն բանէ չէք զրկեր ինքզինքնիդ , այդ պարագային մենք իրարմէ տարբերութիւն չենք ունենար . իմ կարծիքս այն է թէ երբ սնդամ մը ինքզինքնիդ Քրիստոնեայ հոշակած էք , պէտք է զայն գործադրէք խղճմտօրէն , եւ ճշդիւ հնազանդիք օրէնքին , ինքզինքնիդ զրկելով ամէն բանէ եւ համակերպելով աղքատութեան :

— Ատիկա լաւագոյն բանը պիտի ըլլար , պատասխանեց Պամփիլիոս :

— Ինչո՞ւ չէք ընել ուրեմն , ես ալ յօժարակամ պիտի ընէի այդ , եթէ դուք՝ քրիստոնեաներդ՝ ասոր օրինակը տայիք :

— Ո՛հ , մենք բան մը չենք ընել ցուցամոլութեան համար : Քեզի՝ ալ խորհուրդ չեմ տար քու . մերձաւորներդ լքանել եւ մեզի գալ՝ պարզապէս ցուցամոլութեան համար : Ինչ որ մենք կ'ընենք մեր հաւատքին ուժովն է միայն :

— Ի՞նչ ըսել է «մեր հաւատքին ուժովը» :

— Ասով ըսել կուզեմ թէ Քրիստոսի հասկցած կեանքը միայն կրնայ մեզ ազատել այս աշխարհի մեղքերէն եւ մահուանէ : Մարդոց ի՞նչ ըսելը մեզի համար կարեւորութիւն չունի : Մենք այսպէս կ'ապրինք , ոչ թէ աշխարհը հոգ ընելնուս համար , այլ որովհետեւ մեր համոզումն է թէ կեանքի մէջ երջանկութիւն գտնելու միակ միջոցը ասիկայ է :

— Անկարելի է մողողուս՝ ինքն իրեն համար չապրել , առարկից Յուլիոս : Աստուածները մեզ կը ներքնչեն ինքզինքնուս նախապատուութիւն տալու արդար

զգացում մը, եւ փնտռելու մեղի հաճոյք պատճառելու բնութիւնն ունեցող բաներ : Եւ արդէն ձեռք քրիստոնեաներուդ մէջ ալ խնդիրը միեւնոյնն է բացարձակապէս : Հիմա ըսիք ինձ թէ ձեր եղբայրներէն շատերը մեծ յարգ կ'ընծայեն նիւթական ինչքերու : Հակառակ ձեր ուսուցումներուն կը շարունակեն պահպանել իրենց շահերն եւ իրենց հաճոյքները , մանաւանդ որ ձեր անսպառ գթասիրութիւնը զիրենք ատոր մէջ կը քաջալերէ գրեթէ : Հետեւապէս անոնց եւ մեր միջեւ մեծ տարբերութիւն մը չեմ տեսներ :

— Ո՛չ , ո՛չ , պատասխանեց Պամփիլիոս , մեր եղբայրները մեզմէ նուազ զրօնաւորին ճամբէ մը կ'ընթանան , բայց միեւնոյն նպատակին կը ձգտին : Միայն թէ քաջալերուելու պէտք ունին : Ահա ասոնք են մեր հաւատքին առանձնայատկութիւնները :

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ Նոյնը կը մնայ : Բաղէշի մէջ ոճրագործներու ձերբակալութիւնը կը շարունակուի , եւ Պատրիարքարանը կը պնդէ անոնց օրինակելի պատիժ մը տրուելուն վրայ : Սակայն կարինէն եւ ուրիշ գաւառներէ Ազգ. Պատրիարքարան ուղղուած նամակներ , քրդական շարժումի մը երկիւղը մասնաւորիչ կ'ընեն : Նոյն վիճակը կը անտուր Շատախի եւ Վանայ կողմերը , հաեւ Երզնկայի մէջ , ուր առաջնորդին բացակայութեանը՝ փոխանորդին ըրած զիմումները չեն ընդունուիր , եւ կառավարիչը Նոյն իսկ վճռաւոր է Նոյն փոխանորդ քահանայն : Արդիւ կողմը հայ կնոջ մը բռնի առեւանգումը, Տիգրանակերտի կողմը , ձեզրէ , Հայ վրանաբնակներուն վրայ յարձակում եւ կողոպուտ , Չարսանձագի կողմը , հողային հրատապ խնդրէն դուրս որ իր վիճակին մէջ կը մնայ , զիշերայն յարձակում

եւ կողոպուտ տուններու եւ դպրոցական անմեղ աշակերտներու վրայ , եւ ուրիշ զանազան կողմերէ հասած առաւել կամ նուազ ծանր դէպքեր՝ կը ներկայացնեն այնպիսի վիճակ մը որ հեռու է յուզուած միտքերը հանդարտեցնելէ : Ազգ. Վարչութիւնը իր նիստերը կը շարունակէ , լուրջ խորհրդակցութիւններ ունենալով կացութեան վրայ : Վերջին նիստի մը մէջ որոշեց մասնաժողով մը ընտրել իր մէջէն , ուսումնասիրելու համար , այն անհրաժեշտ միջոցները որոնք կրնան նպաստել գաւառներու անդորրութեան , եւ ծրագրով մը ներկայացնել , հետապնդելու համար խնդիրը : Վարչութիւնը իր զիմումներու միջոցին պիտի պահանջէ , կ'ըսուի , կառավարութենէն , որպէս զի Բաղէշի սպանութեանց հեղինակները եւ ուրիշ պզտիկ բռնակալներ , հեռացուցին հայաբնակ գաւառներէն Րումէլի կամ ուրիշ կողմեր , որովհետեւ անոնց բնակութիւնը մշտական վտանգ մըն է անդորրութեան :

ԲԱՆԿԱԼԹԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ խնդիրը հրատապ հանգամանք մը առած է : Քաղաքապետութիւնը վերջնապէս որոշած է գերեզմանատան ամբողջ երկայնքին պողոտան լայնցնել 15 մեղր ներս քաշելով : Պատրիարքարանի պորձակատար Գամէրէֆ. անցեալ շաբթու քաղաքապետ Սուպհի պէյի ներկայացուց այս մասին գրուած քաղաքի , եւ պատասխան ստացաւ թէ կառավարութեան որոշումն անհաւանալի է : Քաղաքապետ պէյը չուզեց լսել գերեզմաններու սրբավայրեր ըլլալու առարկութիւնը : Խառն ժողովն որոշեց Պատրիարքարանէն ձեռնարկ ո'րնել ներքին գործոց նախարարին մօտ , յանուն Կրօն. Ժողովոյ : Պատր. փոխանորդ Հայրը Դ. օր գործակատար էֆ.ին հետ ներքին Գործոց նախարարին զիմումով բողոքեց քաղաքապետ պէյին պատասխանին դէմ , շեշտեց խնդրոյն կրօնական հանգամանքը , եւ ըստ թէ Ժողովրդեան մէջ յուզում առաջ եկած է , եւ ինչպէս ասկէ 40 տարի առաջ եղած է , հիմակ ալ եկեղեցականութիւնը զիմում պիտի ընէ Կայսեր :

Նախարարն յայտնեց թէ յաջորդ օրն իսկ պիտի տեսակցի Սուպի պէյ հետ, եւ ազգին գոհացում տրուելու եղանակով կարգադրութիւն պիտի ըլլայ: Խառն ժողովը Դժ. օր տեղեկանալէ ետքը այս արդիւնքին, որոշեց սպասել ելքին՝ ըստ այնմ ճշդելու համար ազգին բռնելիք ընթացքը:

ԱՆԳԼ. ԴԵՍՊԱՆԱՏԱՆ թարգման Մը. Է. Բէյն անցեալ չարթու ալցելեց Պատրիարքարան, եւ ի բացակայութեան տեղապահ Սրբաղան Հօր, շնորհակալութիւն յայտնեց փոխանորդ Ս. Հօր, Անգլիոյ թագաւորին թագադրութեան ասթիւ պատգամաւորութեան մը միջոցաւ Հայ ազգին յայտնած շնորհաւորութեանց համար: Մը. Բէյն այս ասթիւ հարցումներ ուղղեց Հայ-Եկեղեցւոյ եւ գաւառաց վիճակին մասին, եւ փոխանորդ Ս. Հայրը ծանօթ իրողութիւնները յայտնելէ ետքը, ըստ թէ ազգը կը սպասէ ոճրալործները ձերբակալելու համար եղած ջանքերու արդիւնքին: ԱՏԱՆԱՅԻ եւ չրջակայից կարօտեալներուն յատկացուելու համար Օսմ. ելմը տացոյցին մէջս հմանուած 10,000 ոսկին Ազգ. Պատրիարքարանին յանձնելու համար զատական պաշտօնատունէն գրուեցաւ ներքին գործոց նախարարութեան:

ԱՐՄԱՇԷՆ Տ. Մեսրոպ Մ. Վ. Նարուեան Պատրիարքարան կը հեռագրէ թէ «վանքին սեփական անտառները զաղթականներու կողմէ սկսած են կտրուիլ. կառավարութիւնն անտարբեր կը գտնուի, փութացէք պէտք եղած անօրինութիւնը»: ԿԻԼԻԿԻՈՅ Ս ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Կեսարիա ալցելութենէն ետքը, ուր խանդավառ ընդունելութիւն գտած էր, Մայիսի վերջը ալցելեց Թալաս, ուր ի մէջ ալոց տալցելեց Ամերիկեան մանչերու եւ աղջկանց վարժարանները: Ն. Սրբապետութիւնը անմոռանալի յիշատակներ թողոց Թալասոյին հրու սրտին մէջ: Յետոյ մեկնեցաւ Եօզկատ, ուր տեղ եւս ջերմ ընդունելութիւն գտած է: Այնտեղ Վեհաշնորհ կաթողիկոսը ալցելած է Իթիօպիայի բիւպը եւ Յունաց մետրապօլիտին, որ Եկեղեցական թափօրով եւ դպիրներով դիմաւորած եւ առաջնորդած է զինքը Եկեղեցի, ուր իր խօսած քարոզը թուրքերէնի թարգմանուած է Տ. Խորէն Եպ. Դիմաբսեանի կողմէ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ, ուռնր վկայականաց բաշխումը տեղի ունեցաւ անցեալ ուրբաթ, նշանակելի յաջողութիւն մը ունեցաւ: Տնօրէնը, Օննիկ Էֆ. Ռ. Պէրպէրեան, յաջողապէս կը շարունակէ իր բազմամուտ հօր գործը: Տեղեկաբիւրդը կարգաց եւ որ տպագրուած է, կը ծանուցանէր շատ մը օգտուչատնութիւններ՝ վերջացող չրջանին մէջ գործադրուած, եւ կամ յառաջիկայ չրջանին գործադրելի: Այս տարի վարժարանը կուտայ 21 չրջանաւարտներ, որոնք գիտութեանց եւ լիզուաց մէջ իրենց ձեռք բերած յառաջդիմութեան համար ստացան Գազազեան մրցանակներ, եւ մանաւանդ Կրթական Նախարարութեան կողմէ զրկուած արժէքաւոր նուէրներ: Այդ չրջանաւարտներն են. — Պ. Պ. Օննիկ Փափազեան, Մարտիրոս Աղլամշեան, Քերովսէ Կոստանդեան, Արսէն Պալեան, Ջաւէն Յակոբեան, Յարութ. Մեսրոպեան, Հայկ Նշանեան, Սիսակ Սմբատեան, Յակոբ Եղիսեան, Յովհաննէս Տէվէճեան, Յարութ. Գալաքեան, Ստեփան Մանուկեան, Բարունակ Այիքսանեան, Օննիկ Փանոսեան, Վահան Խարբութեան, Յովհաննէս Աբէլեան, Ջօհրապ Բազարեանդեան, Արմինակ Թահմազեան, Վահրամ Գալաֆեան, Հրաչեայ Թահմազեան, Հմայեակ Մանուկեան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Բիւզանդիոն ատջի օրուան թիւին մէջ կը հրատարակէ պատճէնը Ազգ. Ժողովոյ Ս. Նախագահին ուղղուած նամակի մը, որով Թիֆլիսի վաճառականներու եւ արհեստաւորներու կողմէ 101 անձնաւորութիւններ կը խնդրեն Ազգ. Ժողովէն՝ օր եւ ժամ առաջ վախճան տալ Օրմանեան Ս. ի վրայ տակաւին ծանրացած ամբաստանութեանց խնդրին, որպէս զի Ռուսահայերն եւս կաթող. համադգային ընտրութեան օրը խղճի եւ մաքի կատարեալ անդորրութեամբ կարենան մօտենալ վճռական քուէտուիին:

Արտօնատէր ՀՄԱՅՆԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԵԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

54092 4 J48

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԿՋԻՄԵՆԻ ՔՅԱՆԱՐԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵՒՆ. — Գրեց Միհրան Յովհաննէսեան. — Սահուն եւ շատ գիւրհասկանալի ոճով մը պարզուած են տնտեսագիտագիտական ամենաբարձր սկզբունքները, հոգ տարուելով պաշտօնեցնել երկրին տնտեսական վիճակին եւ պայմաններուն. Հրատարակիչ Յովհ. Գըլըճեան գրատուն, Պոլիս, Չաղմաղճըլար թիւ 25. Գին 5 ղրշ.:

«ՀԱՅՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ». — Լոյս տեսաւ Հմայեակ Արամեանցի ծախագրուած ՀԱՅՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ, հոյակապ գործ, 320 մեծադիր էջով. 70ի չափ Հայ եւ օտարազգի յեղափոխական ու. Ազգ. գործիչներու պատկերներ, Հնչակեան, Դաշնակցական, Ռեւոլյուցիոն, Երգեր, ազգային, ժողովրդական երգեր: Գին 10 ղրշ. 2,50 ֆր., 0.50 ատլար) թղթակաղմ, 12 ղրշ. լաթակաղմ, 15 ղրշ. կաշեկաղմ: Անոնք որ ուղղակի հեղինակէն ֆինէն՝ բօսդի ծախք չեն վճարեր: Մեծաքանակ գնողներու կարեւոր զեղչ: Հեղինակին հասցէն՝ Որմաբազրութիւն Կոնսյի, Կ. Պոլիս, բոսգարկը թիւ 125.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԹՈՎԵԱՆ. — Գրեց Ներսէս Բանաստեղծ, Բագու: Կենսագրական մանրակրկիտ տեղեկութիւններ՝ վերջ Հայաստանի անմահ հեղինակին վրայ, սկսեալ թր մանկութենէն: Տպագր. Տիգրիս, 1911: Դիմել հեղինակին՝ Բագու, Կամ Տիգրիս՝ Կեդք. գրաւաճառանոց: Գին 75 կոպիկ:

ԴԵՐՄԱՆԸ՝ հոգեւոր կեանքի զարգացման եւ արդիւնք հսկակտօն շարժումն. — Հմտալից եւ օգտակար գործ Ձմիւռնիոյ Աւետ. Հայոց հովիւ Վեր. Կարապետ Պ. Աղանախեանի: Տպագր. Իզմիր, 1911, Գին 4 ղրշ.:

ՈՒՍԱՆՈՂ, ամսաթերթ մանկավարժական, գրական, գիտական եւ բանասիրական: Հրատարակուեցաւ 5րդ թիւը, Մարտ 1, 1911.

ԱՆՊԱՏԿԱՆ ՄԱՐԴԸ. — Գրեց Լուրճի Պերճ Լուրճեան. — Խիստ հետաքրքրաշարժ եւ հրահանգիչ պատմութիւն մը, որ երիտասարդ հեղինակին քով կը մատնանշէ վիպագրելու մասնաւոր ընդունակութիւն մը: Դին 3 ղրշ.: Կը գրտնուի ամէն գրաւաճառներու քով:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ.

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆ

ԵՒ ԻՐ

Պատմութիւնը, Վարդապետութիւնը, Վարդապետութիւնը, Բարեկարգութիւնը, Արարողութիւնը, Գրականութիւնը ու ներկայ կացութիւնը.

Դաղը՛նքն հրատարակուած եւ այժմ Հայերէնի վերածուած՝ յոյժ շահեկան աշխատասիրութիւն մը, բաղկացած 270 մեծադիր էջերէ: Գին 15 ղրշ. (բոսթի ծախքով 18 ղրշ. կամ 4 ֆր.): Կեդրոնատեղի՝ Վ. եւ Հ. Տեր-Ներսիսեան վաճառատուն, Պահճէ Դարու, Կ. Պոլիս: Կը գտնուի նաեւ ամէն գրաւաճառներու քով:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԲ

Յ. Գ. ՄՐՏԳԵԱՆԻ

1. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՒՆ. — Ի պէտս բախարաց եւ բարձրագոյն ուսանողաց, գին 7 ղրշ.

2. ՏԻԵՋԵՐԻ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ, — Իբոյժի թէնի հատուածն անմահաւիտի՝ գին 1 ու կէս ղրշ.

Կը վաճառուին Կ. Պոլիս Գըլըճեան գրատունը, եւ մեծաքանակ հեղինակին քով:

3-3